ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

նոյեմբերի 2021 թվականի № ---Ա
ք. Երևան

«ԷՆԵՐՋԻ ՀԻԴՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի մայիսի 20-ի №169Ա որոշման 2-րդ կետով «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) պարտավորեցվել է նշված որոշումն ուժի մեջ մտնելու պահից (2020 թվականի հուլիսի 11-ից) քառասունհինգօրյա ժամկետում՝ մինչև 2020 թվականի օգոստոսի 17-ը, հանձնաժողով ներկայացնել 6 775 000 (վեց միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2022 թվականի մայիսի 8-ը գործողության ժամկետով, ինչը մինչ օրս չի կատարվել,

բ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի օգոստոսի 18-ին ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի №169Ա որոշման 2-րդ կետով նախատեսված պարտավորության խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 18-ի №ԳԲ/34.1-Մ2-5/3502-2020 գրությամբ,

գ) ընկերությունը 2020 թվականի օգոստոսի 25-ին հանձնաժողով է մուտքագրել գրություն, որով վկայակոչելով №ՎԴ/4540/05/20 վարչական գործի առկայությունը՝ պնդել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի հիմքով հարուցված վարչական վարույթի կասեցման անհրաժեշտության մասին,

դ) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը՝ Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 2-ի №303Ա որոշմամբ կասեցվել է ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը՝ մինչև վարչական դատավարության կարգով քննվող №ՎԴ/4540/05/20 գործով վերջնական դատական ակտի կայացումը,

ե) 2021 թվականի մարտի 17-ին տեղի է ունեցել ընկերության անվանման և գտնվելու վայրի փոփոխություն, որի հիման վրա Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 19-ի №191Ա որոշմամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0621 լիցենզիան վերաձևակերպվել է «ԷՆԵՐՋԻ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ,

զ) 2021 թվականի սեպտեմբերի 14-ին Հանձնաժողովում մուտքագրվել է №ՎԴ/4540/05/20 գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2021 թվականի հունիսի 30-ին կայացված վճիռը՝ օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ նշումով: Նշված վճռով մերժվել է ընկերության հայցն ընդդեմ Հանձնաժողովի՝ մասնակիորեն՝ այն է քառասունհինգօրյա ժամկետում 6.775.000 ՀՀ դրամ գումարի երաշխիք ներկայացնելու պարտականություն ընկերության համար սահմանելու մասով Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի №169Ա որոշման 2-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

է) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա 2021 թվականի սեպտեմբերի 17-ից ընկերության նկատմամբ 2020 թվականի օգոստոսի 18-ին հարուցված և կասեցված վարչական վարույթը վերսկսվել է, որի մասին ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի №ԳԲ/34.1-Մ2-5/3189-2021 գրությամբ,

ը) Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի №358Ա որոշմամբ որոշվել է Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի №169Ա որոշման 2-րդ կետով սահմանված երաշխիքը Հանձնաժողով չներկայացնելու համար կասեցնել ընկերությանը տրամադրված ԼԷ №0621 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը,

թ) 2021 թվականի նոյեմբերի 1-ին Հանձնաժողովում մուտքագրվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 15-ի որոշումը, որով ընկերության միջնորդությունը բավարարվել է. հարգելի է համարվել ՀՀ վարչական դատարանի 2021 թվականի հունիսի 30-ի վճռի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու դատավարական ժամկետի բացթողումը, և վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ,

ժ) 2021 թվականի նոյեմբերի 8-ին Հանձնաժողովում մուտքագրվել է ընկերության վարչական բողոքը, որով վերջինս պնդել է, որ տվյալ դեպքում №ՎԴ/4540/05/20 վարչական գործով առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ ու խնդրել անվավեր ճանաչել Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի №358Ա որոշումը,

ժա) Ընկերության՝ Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի №358Ա որոշման դեմ 2021 թվականի նոյեմբերի 8-ին ներկայացված վարչական բողոքի հիման վրա հարուցվել է բողոքարկման վարույթ, որի մասին ընկերությանը տեղեկացվել է 2021 թվականի նոյեմբերի 8-ի №ԳԲ/34.1-Մ2-3/3797-2021 գրությամբ,

ժբ) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը,

ժգ) Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի №358Ա որոշման բողոքարկման վարույթի շրջանակում փաստվել է, որ նշված վարչական վարույթի հետագա ընթացքն ուղղակիորեն կախված է Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի վարույթում գտնվող №ՎԴ/4540/05/20 գործի քննության ելքից, քանի որ տվյալ դատական գործով հայցի առարկան Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի №169Ա որոշման այն կետի վիճարկումն է, որի խախտման փաստով Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի №358Ա որոշմամբ կասեցվել է ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0621 լիցենզիայի գործողությունը, ուստիև նման պայմաններում անհնարին է սույն վարչական վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև հիշյալ դատական գործով վերջնական դատական ակտի կայացնելը, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը և 60-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կասեցնել «Էներջի Հիդրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2021 թվականի նոյեմբերի 8-ին ներկայացված վարչական բողոքի հիման վրա հարուցված բողոքարկման վարույթը՝ մինչև վարչական դատավարության կարգով քննվող №ՎԴ/4540/05/20 գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի նոյեմբերի 24-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
նոյեմբերի 2021թ.